ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ապահովագրության օբյեկտ

Բնակարանների կոնստրուկտիվ տարրերը ՝պատերը, մուտքի դուռը, պատուհանների և դռների կոնստրուկցիաները (բացի միջսենյակայիններից), էլեկտրահաղորդալարերի ցանցը, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման համակարգերի խողովակաշարերը

Հարդարման տարրերը, այդ թվում՝ բոլոր ներքին և/կամ արտաքին երեսպատման և ներկարարական աշխատանքները, ներքին հարդարման աշխատանքները, պատերի, հատակների, առաստաղների ծածկույթները, միջսենյակային դռների կառույցները, ներառյալ ապակեպատումը, միջսենյակային պատուհանային կոնստրուկցիաները

Տեխնիկական սարքավորումները, ոչ տիպային (որոնք Ապահովադիրն է տեղադրել) որոնք իրենց մեջ ներառում են ջեռուցման համակարգերը (այդ թվում հատակի, պատերի, առաստաղի տաքացման համակարգերը), հսկողության և պաշտպանության համակարգերը (այդ թվում տեսախցիկները), հրդեհային անվտանգության, օդափոխության, օդորակման, ջրամատակարարման (այդ թվում՝ ջրակողպման սարքավորումները, լվացարանները, լոգարանները, լոգախցիկներ և այլն), կոյուղու (այդ թվում սանհանգույցի սանտեխնիկական սարքավորումները), գազամատակարարման, էլեկտրասնուցման համակարգերը, Պայմանագրում նշված այլ սարքավորումները,

Շարժական գույքը, որն իր մեջ ներառում է տնային և անձնական կենցաղի առարկաները, այդ թվում՝ կահույք, կենցաղային առարկաներ, ներքին հարդարման առարկաներ և այլն,

Երրորդ անձանց պատճառված վնասի քաղաքացիական պատասխանատվություն՝ Օրինական հիմքերով կամ Ապահովադրի իմացությամբ (թույլտվությամբ) բնակարանում բնակվող անձանց կողմից բնակելի տարածքի ամենօրյա շահագործման հետևանքով երրորդ անձանց կյանքին, առողջությանը և/կամ գույքին պատահական և ոչ կանխամտածված հասցված վնասի պատասխանատվություն

Շենքերի, բնակարանների, բնակելի տների լուսանկարումը կամ տեսանկարահանումը Ապահովագրողի կողմից պարտադիր է։

Ապահովադիր

Ապահովադիր կարող է հանդիսանալ գույքի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով գույքի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

Փոխհատուցում ստացող անձ

ա) *գույքի ապահովագրության մասով՝* գույքի սեփականատեր հանդիսացող կամ իրավական այլ հիմքով գույքի տիրապետման, տնօրինման, օգտագործման (շահագործման) իրավունք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը

բ) *Երրորդ անձանց պատճառված վնասի քաղաքացիական պատասխանատվության ապահովագրության մասով՝* պայմանագրում նշված ապահովագրված անձինք, որոնց գույքին, կյանքին, առողջությանը պատճառվել է վնաս։

Ապահովագրական ռիսկեր

- Հրդեհ, կայծակի հարված, գազի պայթյուն,
- Ջրից առաջացած վնաս,
- Տարերային աղետներ, բացառությամբ երկրաշարժի
- Կոտրանքով գողություն, կողոպուտ, ավազակություն
- Երրորդ անձանց հակաօրինական գործողություններ,
- Բախում, Հարված:

Ապահովագրական գումար, ապահովագրավճար

Մ. քառ	Ներքին հարդարանք			շինության կրող կոնստրուկցիաներ		
	ապվճար	ապգումար	սակագին	ապվճար	ապգումար	սակագին
մինչև 80	5,000	600,000	0.83%	21,000	2,500,000	0.84%
	6,000	800,000	0.75%	23,000	3,000,000	0.77%
	6,500	1,000,000	0.65%	24,500	3,500,000	0.70%
80-150	9,000	1,200,000	0.75%	32,000	4,000,000	0.80%
	10,000	1,400,000	0.71%	35,000	5,000,000	0.70%
	11,000	1,700,000	0.65%	40,000	7,000,000	0.57%
150-250	15,000	2,100,000	0.71%	60,000	8,000,000	0.75%
	16,000	2,500,000	0.64%	70,000	11,000,000	0.64%
	19,000	3,000,000	0.63%	75,000	12,000,000	0.63%

	Տնային գույք			պատասխանատվություն		
	ապվճար	ապգումար	սակագին	ապվճար	ապգումար	սակագին
մինչև 80	6,500	500,000	1.30%	3,000	500,000	0.60%
	8,500	700,000	1.21%	3,500	700,000	0.50%
	9,500	800,000	1.19%	4,500	1,000,000	0.45%
80-150	11,000	900,000	1.22%	6,000	1,200,000	0.50%
	13,000	1,200,000	1.08%	7,000	1,500,000	0.47%
	15,000	1,500,000	1.00%	7,500	1,800,000	0.42%
150-250	21,000	1,800,000	1.17%	11,000	2,200,000	0.50%
	24,000	2,200,000	1.09%	11,500	2,500,000	0.46%
	26,000	2,500,000	1.04%	12,000	3,000,000	0.40%

Ապահովագրված են համարվում շարժական գույքի և տեխնիկական սարքավորումների բոլոր օբյեկտները, որոնք ապահովագրական պատահարի պահին գտնվում են բնակարանում՝ 300 000 ՀՀ դրամ առավելագույն հատուցման սահմանաչափով մեկ առարկայի գծով,
Կոտրանքով գողություն, կողոպուտ, ավազակություն ռիսկից ապահովագրելու դեպքում շարժական գույքի և տեխնիկական սարքավորումների հատուցման առավելագույն սահմանը կազմում է Պայմանագրով սահմանված պատասխանատվության չափի 30%, բայց մեկ առարկայի գծով ոչ ավել քան 2 500 000 ՀՀ դրամ,
Պայմանագրի գործողության ընթացքում երրորդ և ավել պատահարների դեպքում կիրառվում է ոչ պայմանական ֆրանշիզա՝ 120 000 դրամի չափով:
Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ապահովագրավճարի կամ դրա առաջին մասի վճարման հաջորդող օրվա 00:00-ն, բայց ոչ շուտ քան կնքման պահից հետո 10-րդ օրը:
Թույլատրվում է ապահովագրել բնակարաններ, որոնք հանձնվում են վարձակալության 3 ամսից ավել ժամկետով

Չի թույլատրվում ապահովագրվել փայտից ծածկույթով և դյուրավառ պատերով բնակարանները, երրորդ և չորրորդ կարգի վթարային, խարխուլ կամ կապիտալ վերանորոգման ենթակա դուրս գրված շենքերն ու շինությունները,

Ապահովագրավճարի վճարման կարգ և ժամկետ – միանվագ, ապահովագրության պայմանագրի կնքման պահին

Պայմանագրի գործողության ժամկետ – ապահովագրության պայմանագիրը կնքվում է 1 տարի ժամկետով

Ապահովագրության կանոններ - «ԱՐՄԵՆԻԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՍՊԸ Գույքի, գույքի սեփականատերերի (տնօրինողների) քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության կանոններ

Ապահովադրի գործողությունները պատահար տեղի ունենալու դեպքում՝

- Ապահովագրողին տեղեկացնել ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին Ապահովադրին (Շահառուին) այդ իրադարձության մասին հայտնի դառնալու պահից 48 (քառասունութ) ժամվա ընթացքում,
- անհապաղ հայտնել համապատասխան իրավասու մարմիններին ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին Ապահովադրին (Շահառուին) այդ իրադարձության մասին հայտնի դառնալու պահից 48 (քառասունութ) ժամվա ընթացքում (Հայաստանի Ոստիկանությանը՝ (կոտրանքով գողություն, ավազակություն, այլ անձանց կողմից գույքի դիտավորությամբ ոչնչացում (վնասում)), Հայաստանի Հրշեջ ծառայությանը (հրդեհ, պայթյուն, կայծակ), գույքի ոչնչացման, վնասման կամ կորստի պատճառներն ու հանգամանքները պարզելու իրավասություն ունեցող այլ մարմիններին:
- Ապահովագրողն ապահովագրական պատահարի մասին բոլոր անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուն հաջորդող օրվանից հաշվված առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ իրականացնում է ապահովագրական հատուցումը: